## *4.3 Զբոսաշրջություն*

### *4.3.1. Միջազգային զբոսաշրջություն*

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2004թ. հունվար-հունիսին հանրապետություն են ժամանել 93545 զբոսաշրջիկներ, 2003թ. նույն ժամանակաշրջանի 74633 զբոսաշրջիկների դիմաց կամ հավելաճը կազմել է 25.3%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել են 94808 մարդ, որը 2003թ. հունվար-հունիսի նկատմամբ աճել է 36.5%-ով:

**Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ**
**2003-2004թթ. հունվար-հունիսին**

*(մարդ)*

| | 2003 թ. հունվար-հունիսին | 2004 թ. հունվար-հունիսին | 2004թ. հունվար- հունիսին 2003թ. հունվար -հունիսին նկատմամբ,% |
|---|---|---|---|
| *Հյուրանոցների քանակը* , որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների | 28 | 31 | 110.7 |
| *Ժամանողներ* | | | |
| Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ԶՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ[1] | 74633 | 93545 | 125.3 |
| որոնցից տեղավորվել են՝ | | | |
| *հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում* | 12794 | 13245 | 103.5 |
| *բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն* | 61839 | 80300 | 129.9 |
| *Մեկնողներ* | | | |
| Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ԶՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ[1] | 73050 | 94808 | 136.5 |
| որոնցից ուղևորությունը կազմակերպվել է | | | |
| զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից | 2090 | 1443 | 76.4 |
| ինքնուրույն | 70960 | 93365 | 138.2 |

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների տվյալների, 2004թ. հունվար-հունիսին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 32.5%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, իսկ 67.5%-ը՝ ոչ ԱՊՀ երկրներին :

---

*[1] Բերված տվյալների հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունից, ՀՀ ԱԱԾ-ից, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից և ՌԴ սահմանային զորքերից: Միաժամանակ, ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել 2002թ. II եռամսյակում ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված "Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության" արդյունքները:*

*[1] Բերված տվյալների հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունից, ՀՀ ԱԱԾ-ից, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից և ՌԴ սահմանային զորքերից: Միաժամանակ, ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել 2002թ. II եռամսյակում ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված "Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության" արդյունքները:*

## ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2003-2004թթ. հունվար-հունիսին[2]

| | Տեսակարար կշիռը,% | | Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, % |
|---|---|---|---|
| | 2003թ հունվար հունիսին | 2004թ. հունվար-հունիսին | |
| **Ընդամենը** | **100.0** | **100.0** | **103.5** |
| այդ թվում՝ | | | |
| **ԱՊՀ երկրներ** | **41.9** | **32.5** | **80.2** |
| այդ թվում՝ | | | |
| Ռուսաստանի Դաշնություն | 33.1 | 23.7 | 74.1 |
| Վրաստան | 6.2 | 6.9 | 115.2 |
| ԱՊՀ այլ երկրներ | 2.7 | 1.9 | 73.8 |
| **Ոչ ԱՊՀ երկրներ** | **58.1** | **67.5** | **120.4** |
| այդ թվում՝ | | | |
| **ԵՄ 25 երկրներ** | **25.2** | **29.3** | **120.4** |
| այդ թվում՝ | | | |
| Ֆրանսիա | 6.1 | 9.7 | 164.1 |
| Գերմանիա | 6.5 | 4.8 | 77.1 |
| Մեծ Բրիտանիա | 5.5 | 6.3 | 120.0 |
| ԵՄ այլ երկրներ | 7.1 | 8.4 | 122.3 |
| **Այլ երկրներ** | **32.8** | **38.2** | **120.4** |
| այդ թվում՝ | | | |
| ԱՄՆ | 15.9 | 20.0 | 130.9 |
| Իրան | 4.8 | 5.1 | 108.2 |
| Թուրքիա | 1.0 | 1.2 | 118.2 |
| Կանադա | 1.2 | 1.7 | 149.0 |
| այլ երկրներ | 9.9 | 10.2 | 106.3 |

## Զբոսաշրջության ցուցանիշներն ըստ նպատակի

*(մարդ)*

| | 2003 թ. հունվար-հունիս | 2004 թ. հունվար-հունիս | Տեսակարար կշիռը (2004թ. հունվար-հունիս,%) |
|---|---|---|---|
| *Մեկնողներ*<br>**Ընդամենը զբոսաշրջիկներ**[1] | 2090 | 1443 | 100 |
| որոնցից ըստ նպատակի | | | |
| գործնական | 921 | 340 | 23.6 |
| հանգստի և ժամանցի | 415 | 651 | 45.1 |
| կրթության | 0 | 0 | 0.0 |
| բուժման | 0 | 0 | 0.0 |
| այլ | 754 | 452 | 31.3 |
| ***Ժամանողներ*** | | | |
| **Ընդամենը զբոսաշրջիկներ**[2] | 12794 | 13245 | 100.0 |
| որոնցից ըստ նպատակի | | | |
| գործնական | 7468 | 5591 | 42.2 |
| հանգստի և ժամանցի | 1048 | 2515 | 19.0 |
| կրթության | 61 | 73 | 0.6 |
| բուժման | 125 | 30 | 0.2 |
| այլ | 4092 | 5036 | 38.0 |

*[2] Բերված տվյալները արտացոլում են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում հաշվառված զբոսաշրջիկներին:*

*[1] Բերված տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը:*

*[2] Տվյալները ստացված են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում տեղավորված զբոսաշրջիկների վերաբերյալ:*